ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Մուտք 03 JUN 2020 № Էջեր Կցված փաստաթուղթ

«02» հունիս 2020թ. N 1730

Ընդհանուր բաժին №5242 ՊԵՂԵՐԻՑ JUN 2020 Կից Նշում 10.40

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103052620 առ 15.05.2020թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Ստաց. 03.06.20 ժ. 10¹⁵

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

02.06.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. հունիսի 02 – ի N 1730 – Ա հրամանի

# ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
# ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | դեղաձև | դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | արտադրող ֆիրման | երկիր | գրանցման հավաստագրի իրավատեր | երկիր | բացթողման կարգ | եզրակացության համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հեպտրալ | ադեմետիոնին | դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի | 400մգ; (5) ապակե սրվակներ և (5) լուծիչ ամպուլում 5մլ | Բիոլոգիչի Իտալիա Լաբորատորիես Ս.ռ.լ., վիա Ֆիլիպո Սերպերո, 2-20060 Մասատե (ՄԻ)-բալք արտադրող, փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ֆամար Ա.Վ.Է. Ալիմոս Փլանտ 63, Ագ. Դիմիտրիոու փ., Ագիոու Դիմիտրիոու | Իտալիա | Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ, Ֆրոյնդալի 9Ա, 30173 Հանովեր | Գերմանիա | Դ | 19240 15.05.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 63, Ալիմոս Ատիկի, 17456, Հունաստան-լուծիչի արտադրող և առաջնային փաթեթավորող | | | | | | |
| 2. | Իբուպրոդեմ 600 | իբուպրոֆեն | դեղահատեր թաղանթապատ | 600մգ; (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Ֆարմալաբոր-Պրոդուտոս Ֆարմացեւտիկոս, Ս.Ա. Զոնա Ինդուստրիալ դե Կոնդեիկսա-ա-Նովա, Կոնդեիկսա-ա-Նովա, 3150-194 | Պորտուգալիա | ԴեմիՖարմ Գրիբոյեդովի 12, ապ.25. Սևան 1501 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 19241 15.05.2020 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 3. | Ասկոֆեն Լ | ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին | դեղահատեր | 200մգ+200մգ+40մգ; (10) բլիստերում | 'Լուբնիֆարմ' ՀԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Պետրովսկի փ. 16 | Ուկրաինա | 'Լուբնիֆարմ' ՀԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Պետրովսկի փ. 16 | Ուկրաինա | ԱԴ | 19242 15.05.2020 | Ընդհանուր հիմունքներով (հին կարգ) |
| 4. | Միօքսանտ | ցիսատրակուրիում (ցիսատրակուրիում բեզիլատ) | լուծույթ ն/ե ներարկման | 2մգ/մլ; (5) ապակե սրվակներ 2.5մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 19243 15.05.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |